ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 6, 1963 Общественные науки

ՀԱԴՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Վ. Ա. Հարությունյան

ՍԱՐԳԻՍ ԿԱՍՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱ-ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀ

Սովետական Միության կոմունիստական պարտիայի նշանավոր գործիչ, անդրկովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարներից մեկը՝ Սարգիս Կասյանը իր գիտակից կյանքն ամբողջովին նվիրեց պրոլետարիատին, նրա պայքարին ու հաղթանակին։ Ս. Կասյանը Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների ստեղծողներից ու ղեկավարներից մեկն էր, լենինյան հին գվարդիայի զինվորը, որը զոհ գնաց անհատի պաշտամունքի ժամանակաշրջանում տեղ գտած անօրինականությանը։

1905 թվականին մտնելով լենինյան պարտիայի շարքերը, Սարգիս Կասյանը սկզբից ևեթ դարձավ պրոֆեսիոնալ ռևոլյուցիոներ, դրսևորելով իրեն որպես բոլշևիկ-հրապարակախոս, ժուռնալիստ, մասսաների տաղանդավոր կազմակերպիչ, մարքսիզմ-լենինիզմի գաղափարների լավագույն պրոպագանդիստ։

Ս. Կասյանը Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի հետ մեկտեղ հանդիսացել է կովկասահայ նախահոկտեմբերյան բոլշևիկյան մամուլի ստեղծողը և ղեկավարը։ Նրա խմբագրությամբ հրատարակվել են՝ «Բանվորի ձայն», «Կայծ», «Նոր խոսք», «Օրեր», «Մեր խոսքը» և այլ թերթեր ու ժուռնալներ, որոնց էջերում նա հանդես է եկել ժամանակակից հուզող հարցերի մեկնաբանմանը նվիրված բազմաթիվ հոդվածներով՝ անխնա պայքար կազմակերպելով ցարիզմի և հակառևոլյուցիոն պարտիաների գաղափարախոսության դեմ։ Սարգիս Կասյանն իր գործունեությունը չի սահմանափակել սոսկ գրավոր պրոպագանդայով և բանավոր ագիտացիայով։ Կասյանը ռևոլյուցիոն նոր վերելքի ժամանակաշրջանում տեսական ու հրապարակախոսական աշխատանքին զուգընթաց կատարում է նաև պարտիական պրակտիկ աշխատանք։ Նա Ստեփան Շահումյանի, Ս. Օրջոնիկիձեի, Ս. Սպանդարյանի, Կամոյի, Ա. Ջափարիձեի և ուրիշ ականավոր գործիչների հետ միասին եռանդուն աշխատանք է տանում Անդրկովկասի քաղաքներում ու շրջաններում բոլշևիկյան բջիջների վերականգնման և ընդարձակման գործում։ Կասյանն աչքի էր ընկնում որպես Անդրկովկասի տնտեսական կյանքին, դասակարգային հարաբերություններին և ազգամիջյան բարդ փոխհարաբերություններին իրազեկ, պրակտիկ ու գիտակ գործիչ։ Մարքսիզմ-լենինիզմի գիտության հարցերում ունեցած խորը պատրաստությունը, ժուռնալիստ հրապարակախոսի հատուկ ձիրքն ու աշխատասիրությունը, ռևոլյուցիոն կիրքն ու նվիրվածությունը դեպի մեծ գործը, այս ամենը նրան դարձրին ականավոր պարտիական գործիչ։ Սարգիս Կասյանը անխնա էր պարտիայի բոլոր թշնամիների նկատմամբ, կովկասյան իրականության մեջ պրոլետարական ինտերնացիոնալիզմի ջահակիրներից մեկն էր։

բուրժուական նացիոնալիզմի՝ լիբերալիզմի թշնամին։ Լինելով մեծ ինտերնացիոնալիստ, նա երբեք չէր կտրվում իրականությունից և մասնակցում էր այն պայքարին, որ մղում էր պարտիան բուրժուա-նացիոնալիստական պարտիաների դեմ։

Ռուսական առաջին ռևոլյուցիայի և ստոլիպինյան ռեակցիայի տարիներին Ս. Կասյանը վճռական պայքար էր մղում բուրժուական նացիոնալիզմի, մենշևիկ-լիկվիդատորների, օտզովիստների և հակամարքսիստական այլ հոսանքների դեմ։

1912 թվականին Սարգիս Կասյանը ականավոր բոլշևիկներ Ս. Սպանդարյանի, Ե. Ստասովայի և մյուսների ձերբակալությունից հետո համախմբում է ազատ մնացած բոլշևիկյան ղեկավար գործիչներին, վերականգնում է Թիֆլիսի բոլշևիկյան կազմակերպության աշխատանքները, սերտ կապ հաստատում Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների հետ։

Այդ շրջանում մեծ է Սարգիս Կասյանի դերը Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարման ու նոր բջիջների կազմակերպման գործում։ Կասյանը հանդիսանում է մայովկաների և բանվորական ցույցերի կազմակերպիչներից մեկը, նրա ղեկավարությամբ ու անմիջական մասնակցությամբ հիմնադրվում է Թիֆլիսի առևտրա-արդյունաբերողների հասարակական ակումբը՝ որի գաղափարական ղեկավարը Կասյանն ինքն էր։ Այս ակումբում հաճախակի կազմակերպվում էին ժողովներ, դիսկուսիաներ այս կամ այն հարցի շուրջը, բոլշևիկների տեսակետները տարածելու համար, կարդացվում էր զեկուցումներ։ Հենց այս ակումբում էլ Ս. Կասյանը ջախջախիչ հարված է հասցրնում մենշևիկ-լիկվիդատորների պարագլուխներին՝ Պետական դումայի անդամներին։

Ս. Կասյանի գործունեության մեջ նշանակալից երևույթ էր 1913 թվականի նրա նամակագրությունը ռևոլյուցիայի առաջնորդ Վ. Ի. Լենինի և Կենտրոնական կոմիտեի հետ։ Կասյանը իրազեկ է պահում Լենինին Անդրկովկասում բոլշևիկյան կազմակերպությունների աշխատանքի և նրա վերելքի մասին և խնդրում համապատասխան ցուցումներ տալ իրենց հետագա աշխատանքների համար։ Վ. Ի. Լենինի անունից Ն. Կրուպսկայան պատասխանում է Ս. Կասյանի նամակներին, որտեղ տալիս է և հանձնարարություններ, և տեղեկություններ Կենտրոնական կոմիտեի աշխատանքի մասին։

Սարգիս Կասյանի ռևոլյուցիոն ակտիվ գործունեությունն աննկատ չի մնում ցարական օխրանկայի կողմից և 1914 թվականի ապրիլի 26-ին մի շարք բոլշևիկների հետ նա ձերբակալվում և հինգ տարի ժամանակով աքսորվում սկզբում Աստրախան, ապա Վոլոգդա, ուր մնում է մինչև փետրվարյան ռևոլյուցիան։

Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայից հետո ազատվելով ցարական աքսորից, Կասյանն անմիջապես վերադառնում է Թիֆլիս և շուտով ընտրվում ՌՍԴ(բ)Պ Թիֆլիսի կոմիտեի անդամ։ Նա մեծ աշխատանք է տանում Անդրկովկասի բազմազգ աշխատավորության շրջանում, բազմաթիվ հոդվածներով հանդես գալիս ռուսական և հայ բոլշևիկյան մամուլում, Անդրկովկասի աշխատավորներին կոչ անելով անհաշտ պայքար ծավալել բուրժուա-նացիոնալիստական պարտիաների և նրանց ոգեշնչողների՝ օտարերկրյա իմպերիալիստների դեմ։

Կասյանը Ստ. Շահումյանի, Ա. Ջափարիձեի, Մ. Ազիզբեկովի, Մ. Ցխակայայի և ուրիշ ականավոր բոլշևիկների հետ եռանդուն աշխատանք է տա-

նում Անդրկովկասում, հետևողականորեն պայքարում Վ. Ի. Լենինի ապրիլյան թեզիսներում առաջ քաշված դրույթներն Անդրկովկասում իրագործելու համար։ 1919 թ. վրացական մենշևիկյան կառավարության կողմից Ս. Կասյանը ձերբակալվում է, բայց նրան հաջողվում է շուտ ազատվել և Կովկասյան Երկրային կոմիտեի հանձնարարությամբ անցնել բոլշևիկյան աշխատանքի անցնել Հայաստանում։

Ա. Կասյանի հետ մեկտեղ Հայաստան եկավ նաև Ա. Մռավյանը։ Անվանի բոլշևիկների Հայաստան գալն աշխուժացնում է տեղական բոլշևիկյան կազմակերպությունների աշխատանքը, պայմաններ նախապատրաստում դրանց միավորման համար։

Հեղափոխության վերելքի, հանուն սովետական իշխանության Հայաստանի աշխատավոր զանգվածների պայքարի ակտիվացման ժամանակաշրջանում, 1919 թվականի սեպտեմբերին Կասյանի ղեկավարությամբ տեղի է ունենում Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների խորհրդակցություն, որտեղ Կասյանը հանդես է գալիս զեկուցումով։ Խորհրդակցության ժամանակ ստեղծված ՌԿ(բ)Պ Հայաստանի Կոմիտեի (Արմենկոմ) կազմում ընտրվեց նաև Կասյանը։

ՌԿ(բ)Պ Հայաստանի Կոմիտեի հանձնարարությամբ Կասյանը դաշնակների հետապնդման պայմաններում «Ս. Աթենյան» ծածկանունով գրեց «Ի՞նչ է ելքը» գիրքը, որտեղ նա անողոք կերպով մերկացնում է իմպերիալիստական պետություններին ու նրանց կամակատար դաշնակներին։ Կասյանը ցույց է տալիս, որ հայ ժողովուրդը իր թշվառ վիճակից չի կարող դուրս գալ դիմելով արևմուտքի պետությունների ողորմությանը. «ով դեռ հավատում է դրան, կույր է ու հիմար,—գրում է Կասյանը,—կան մարդիկ, որոնք կարճամտորեն կարծում և անպատասխանատու կերպով ուսուցանում են, որ հավիտենականության անդունդի առջև կանգնած Հայաստանի ժողովրդի «փրկիչ հրեշտակը» ամերիկյան իմպերիալիզմն է լինելու։ Անգլիայից և Ֆրանսիայից ապտակահարված այդ դիմադուրկ հերոսները ամերիկյան իմպերիալիզմն երկինք են բարձրացնում՝ անմեղ ագավնու կերպարանքով ներկայացնելով...»[1]։

Կասյանը մերկացնելով ամերիկյան իմպերիալիստների մտադրությունները Հայաստանի նկատմամբ, ցույց է տալիս, որ հայ ժողովրդի փրկության միակ ելքը սոցիալիստական հեղափոխության մեջ է։ «Ոչ, Հայաստանի ժողովրդի փրկության ուղին այնտեղ չէ, ուր որոնում են պատե-պատ ընկած դաշնակցականները և մյուս ազգայնական եղեղուկ մտավորականները,—գրում է նա,—երկաթի և արյան միջոցով պահվող ժողովրդական տառապանքի և հառաչանքի վրա կառուցված այդ աշխարհը չէ, որ պիտի փրկե հայ ժողովրդին տանջանքից և հառաչանքից, այլ այն աշխարհը, ուրի արշալույսը բացվել է Ռուսական հյուսիսում։ Միակ ելքը այդ է, ուրիշը չկա»[2]։

Ս. Կասյանի սույն գիրքը հանդիսացավ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների գործունեության ծրագիրը և հսկայական դեր խաղաց Հայաստանի աշխատավորների հեղափոխական մտքի աշխուժացման ու զարգացման գործում։ Այս գրքի նշանակությունն առավել կարևոր դարձավ նրանով, որ այն լույս տեսավ Հայաստանի Կոմունիստական պարտիայի 1920 թվականի

---

1 Ս. Աթենյան, Ի՞նչ է ելքը, Երևան, 1919, էջ 66։

2 Նույն տեղում (ընդգծումը բնագրինն է—Վ. Հ.)։

Հունվարյան անլեգալ կոնֆերանսի նախօրյակին և օժանդակեց կոմունիստներին՝ կողմնորոշվելու դաշնակների ռեժիմի դեմ մղվող պայքարի կոնկրետ դարձերում։

Սեպտեմբերյան խորհրդակցության որոշմամբ 1920 թվականի հունվարի երկրորդ կեսերին Երևանում գումարվեց Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջին կոնֆերանսը, որտեղ ընթացիկ մոմենտի մասին զեկուցումով հանդես եկավ Ս. Կասյանը։ Զեկուցման առթիվ ընդունված բանաձևում կոնֆերանսը որոշում է աշխատավոր զանգվածներին նախապատրաստել զինված ապստամբության՝ դաշնակների և նրանց օտարերկրյա իմպերիալիստական տերերի արյունոտ լուծը տապալելու և Հայաստանում՝ սովետական իշխանություն հաստատելու համար։

Կոնֆերանսն ընտրեց ՌԿ(բ)Պ Հայաստանի կոմիտեի նոր կազմ, որի մեջ ընտրվեցին Ս. Կասյանը, Ա. Մռավյանը, Ս. Ալավերդյանը և ուրիշներ։

Ս. Կասյանին չվիճակվեց երկար շարունակել ընդհատակյա գործունեությունը Հայաստանում։ Ս. Կասյանը, Ա. Մռավյանը, ինչպես նաև Հայաստանի կոմպարտիայի մի շարք այլ գործիչներ ձերբակալվեցին կամ աքսորվեցին Հայաստանից, որի հետևանքով նրանք չկարողացան մոտիկից մասնակցել Մայիսյան ապստամբությանը։

Դաշնակների բանտից ազատվելուց հետո Ս. Կասյանը անլեգալ կերպով մեկնում է Թիֆլիս և ռևոլյուցիոն աշխատանք տանում մենշևիկյան Վրաստանում։

Այստեղ նա ձերբակալվում է վրացական իշխանությունների կողմից, սակայն Սովետական Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցչի պահանջով Կասյանը ազատ է արձակվում և մեկնում է Սովետական Ադրբեջան, որտեղից ղեկավարում է Հայաստանի աշխատավորների պայքարը։

1920 թվականի վերջերին Հայաստանի աշխատավորների ռևոլյուցիոն պայքարը հանուն սովետական իշխանության աննախընթաց վերելք ապրեց, Հայաստանի բանվորներն ու գյուղացիները Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ բարձրացրին ապստամբության դրոշը։ Ապստամբությունը ղեկավարելու համար 1920 թվականի նոյեմբերի վերջերին ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան բյուրոն և Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմը ստեղծեցին Հայաստանի ռևոլյուցիոն կոմիտե, որի կազմում հաստատվեցին Ս. Կասյանը որպես նախագահ, իսկ անդամներ՝ ռևոլյուցիոն պայքարի բովով անցած անվանի բոլշևիկներ Ս. Տեր-Գաբրիելյանը, Ա. Մռավյանը, Ալ. Բեգզադյանը, Իս. Դովլաթյանը և Ա. Նուրիջանյանը։

1920 թվականի նոյեմբերի 29-ին Ռևկոմի անդամները Ս. Կասյանի գլխավորությամբ ժամանում են Քարվան-Սարայ (Իջևան) և իրենց ձեռքն են վերցնում զինված ապստամբության ղեկավարությունը։ Հայաստանի ռազմառևոլյուցիոն կոմիտեն Ս. Կասյանի գլխավորությամբ շտապում է Երևան՝ Կարմիր բանակի օգնությամբ Թուրքական արշավանքը կասեցնելու և ամբողջ երկրում սովետական իշխանություն հաստատելու համար։

Ս. Կասյանը հայ ժողովրդի անունից 1920 թվականի նոյեմբերի 30-ին դիմում է ազատարար Սովետական Ռուսաստանի կառավարությանը և անձամբ Վ. Ի. Լենինին՝ խնդրելով օգնություն ցույց տալ Հայաստանի ապստամբ աշխատավորությանը։

1920 թվականի դեկտեմբերի 2-ին Վ. Ի. Լենինը հեռագիր է ուղարկում

Հայաստանի ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի նախագահ Ս. Կասյանին, որտեղ ասված էր. «Հանձինս Ձեզ ողջունում եմ իմպերիալիզմի ճնշումից ազատագրված աշխատավորական Սովետական Հայաստանին»[3]։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվեցին այնպիսի ժամանակ, երբ իմպերիալիստական պատերազմի և հատկապես դաշնակցականների արյունոտ տիրապետության տարիներին ժողովրդական տնտեսությունը ամբողջովին քայքայվել էր։ Թուրքիայի դեմ մղած պատերազմում դաշնակցականները կորցրին Ալեքսանդրապոլն իր գավառով։ Թուրքական հորդաները կանգնած էին Ալեքսանդրապոլում և առիթ էին փնտրում պատերազմ սկսել այս անգամ նորաստեղծ Սովետական Հայաստանի դեմ։

Այդ հանգամանքները ստիպում էին ՀԿՊ Կենտկոմին և Հայաստանի Ռևկոմին վարել յուրահատուկ տակտիկա ինչպես արտաքին, այնպես էլ ներքին հարցերում։

Ս. Կասյանը Ռևկոմի և ՀԿ(բ)Պ Կենտկոմի մյուս գործիչների հետ մշակում է Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի դեկրետները, հրամանները և որոշումները, որոնց մեջ օրենսդրորեն ձևակերպվում են Հայաստանում կատարվող սոցիալիստական և քաղաքական արմատական հեղաշրջման գլխավոր հարցերը։

Ինչպես հայտնի է, Վ. Ի. Լենինը 1920—1921 թվականներին իր ելույթների ու նամակների մեջ բազմիցս նշել է Անդրկովկասյան երկրամասի յուրօրինակությունների մասին, դիրեկտիվ տվել ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան բյուրոյին ու տեղական կոմունիստական կազմակերպություններին՝ հաշվի առնել այդ յուրօրինակությունները, մշակել ինքնուրույն տակտիկա։

Լենինյան դիրեկտիվներից ելնելով, ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան բյուրոն անհրաժեշտ ղեկավար ցուցումներ էր տալիս Ս. Կասյանին և Հայաստանի կոմպարտիայի կենտկոմին ու հեղկոմի մյուս անդամներին։

Ս. Օրջոնիկիձեն սիստեմատիկաբար ուղիղ հեռագրագծով կապվում էր Ս. Կասյանի և մյուս գործիչների հետ և ինֆորմացիա ստանում Հայաստանում կատարվող իրադարձությունների մասին, խորհուրդ տալիս «ոչ մի ռեպրեսիայի չդիմել և առհասարակ լինել վերին աստիճանի զգույշ, բնակչության նկատմամբ լինել կորեկտ...»[4]։

Կասյանը, ելնելով պարտիայի Կովկասյան բյուրոյի և Վ. Ի. Լենինի ցուցումներից, նկատի առնելով տեղական պայմանները, Երևան ժամանելուց մի քանի օր անց, դեկտեմբերի 9-ին, պարտիական ակտիվի ժողովում զեկուցում է Հայաստանում կատարված հեղաշրջման նշանակության և սովետական իշխանության խնդիրների մասին, նա շարադրում է Ռևկոմի քաղաքականության սկզբունքները։ Այդ զեկուցման մեջ Կասյանը վերլուծում է Հայաստանի քաղաքական ու տնտեսական վիճակը, մանրամասն շարադրում սովետական իշխանության և կոմունիստական պարտիայի կիրառելիք քաղաքականության հիմնական հարցերը։ Նա նշում է, որ «Կոմունիստական կուսակցության համար ամենից կարևորն է՝ բանվորա-գյուղացիական հեղափոխության թագավորությունը։ Եվ այնտեղ, որտեղ հնարավոր է, պետք է խույս տալ արյուն թափելուց։ Տվյալ դեպքում Հայաստանում հեղափոխության առաջին քայլը, այսինքն՝ իշխանության գրավումն անցավ հանգիստ, և դա հանդիսանում է Հա-

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 550։
4 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 85, ց. 14, գ. 735, թ. 4։

յաստանի բանվորա-գյուղացիական հեղափոխության գրական կողմը։ Մնում է պաշտպանել և ամրապնդել այդ իշխանությունը։ Այդ գործում կոմունիստական կուսակցությունը երբեք վրիժառությամբ չի առաջնորդվի։ Կուսակցությունը, որպես այդպիսին, չի իմանում վրեժի զգացումը և պետք է կատարի հեղափոխական ռեալ աշխատանք։ Եվ այդպես մոտենալով խնդրին՝ նոր հեղափոխական իշխանությունը մտադիր չէ դիմել ճնշումների, հին իշխանության կատարած գործողությունների համար»[5]։

Այնուհետև Կասյանը խոսում է տնտեսական քաղաքականության մասին։ Նա ընդգծում է, որ չի կարելի Սովետական Ռուսաստանում կամ նույնիսկ Սովետական Ադրբեջանում կիրառված քաղաքականությունը նույնությամբ կիրառել Սովետական Հայաստանում։ Տնտեսական քաղաքականությունը երբեք չի կարելի միակերպ անցկացնել ամբողջ երկրում. նա կախված է երկրի տնտեսական անմիջական կազմից։ «Մենք կազդայնացնենք խոշոր գործարանները, կպայքարենք գյուղական կուլակների դեմ, որոնք պարապում են կեղեքելով և վաշխառությամբ,—ասում է նա,—սակայն միջակ գյուղացիությանը, մանր տնտեսություն վարողներին, տնայնագործությամբ պարապողներին, ինչպես ցույց տվեց Խորհրդային Ռուսաստանի փորձը, ձեռք չենք տա»[6]։

Այսպիսով Ռկոմը և Հայաստանի Կենտկոմը համառորեն աշխատում էին կիրառել այն միակ ճիշտ քաղաքականությունը, որը թելադրում էին տեղական պայմանները, սակայն Ռկոմի և Կենտկոմի անդամների մեջ որոշ տարաձայնություններ եղել և թույլ է տրվել առանձին սխալներ։

Հայաստանի բանվորների ու գյուղացիների ռևոլյուցիոն նվաճումները պաշտպանելու համար սովետական իշխանության հաստատման առաջին օրից սկսած Կասյանը ձեռնամուխ է լինում Կարմիր բանակի կազմակերպմանը։

1921 թվականի հունվարի 27-ին Ս. Կասյանի և Ռազմական կոմիսար Ա. Նուրիջանյանի ստորագրությամբ հրապարակվում է հրաման Կարմիր բանակում քաղ-մասսայական աշխատանքներ կատարելու մասին։

Հայկական Կարմիր բանակը կազմակերպվեց այն ժամանակ, երբ Հայաստանում զգալի պակաս էր զգացվում հացի և այլ սննդամթերքի, ժողովրդի մեծ մասը տեղահան էր եղել և սոված էր։ Նման պայմաններում Ռկոմը օգնություն է կազմակերպում Կարմիր բանակում գտնվող մարտիկների ընտանիքներին։ 1921 թվականի հունվարի 4-ին Ռկոմի դեկրետով պետական միջոցներից նպաստ է բաց թողնվում բանակայինների ընտանիքներին. այս նույն դեկրետով էլ նրանք ազատվում են պետական հարկերից, իսկ հաշմանդամ զինվորականները՝ թոշակավորվում են։

Կարմիր բանակի ամրապնդման համար ձեռք են առնվում նաև մի շարք այլ միջոցառումներ, որոնք օգնում են բանակի մարտունակության բարձրացմանը։ Կարևոր նշանակություն ունեցավ Կարմիր բանակի քաղաքական բաժնի կազմակերպումը, որի պատասխանատու ղեկավար է նշանակվում ականավոր բոլշևիկ Հ. Լապյանը։

Սարգիս Կասյանը, Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի նախագահի պարտա-

---

5 Տես «Կոմունիստ» հայերեն թերթը (Երևան), 12 դեկտեմբերի, 1920 թ.։

6 Նույն տեղում։

կանության հետ միասին ղեկավարում էր նաև գյուղատնտեսության ժողկոմատը։

Հայաստանի Ռևկոմը և գյուղատնտեսության ժողկոմատը իրականացնում են այն հիմնական սկզբունքները, որոնք նշված էին 1920 թվականի նոյեմբերի 29-ի դեկլարացիայում։

1920 թվականի դեկտեմբերի 28-ին Ս. Կասյանի և Հողժողկոմատի գծով նրա տեղակալ Կամսարականի ստորագրությամբ հրապարակվում է Ռևկոմի պատմական դեկրետը հողերի ազգայնացման մասին։

Հայաստանի քայքայված գյուղատնտեսության արագ վերականգնման համար Ռևկոմը և Գյուղատնտեսության ժողկոմատը ձեռք են առնում մի շարք միջոցառումներ։ 1921 թվականի փետրվարի 9-ին Ս. Կասյանի ստորագրությամբ հրապարակվում է դեկրետ՝ գյուղատնտեսության մասնագետների ցուցակագրության և մոբիլիզացիայի մասին։

Ռևկոմի և Գյուղատնտեսության կոմիսարիատի ձեռք առած միջոցառումները նպաստում են գյուղատնտեսության արագ վերականգնման գործին։ Տասնյակ մասնագետներ ուղարկվում են շրջանները, նախապատրաստական աշխատանքներ են ձեռնարկվում դարերով ծարավ խոպան հողերը ջրովի դարձնելու համար։

Գյուղատնտեսության արագ վերականգնման հարցը Հայաստանի սովետական իշխանության գլխավոր և առաջնակարգ խնդիրներից մեկն էր։ Նա նպատակ էր գրել հողերը ոռոգովի դարձնելու միջոցով Հայաստանը դարձնել զարգացած գյուղատնտեսության երկիր։

Սովետական Հայաստանի կառավարությունն ամեն կերպ աջակցում էր հողի աշխատավորներին, որպեսզի նրանք որքան հնարավոր է ավելի շատ հող յուրացնեն և ընդարձակեն ցանքատարածությունները։ 1921 թվականի ապրիլի 10-ին հրապարակվում է Հայաստանի Ռևկոմի և Գյուղատնտեսության ժողկոմատի համատեղ դեկրետը, որտեղ ասված էր.

«Հայաստանում ստեղծված տնտեսական ծանր ճգնաժամից ազատվել կարելի է միայն որքան հնարավոր է մեծ քանակությամբ ցանքս անելով։ Այդ նպատակով Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության հեղափոխական կոմիտեն պատրաստ լինելով ամեն տեսակ դյուրություն և աջակցություն ցույց տալու բոլոր երկրագործներին և երկրագործությամբ պարապել ցանկացողներին առաջին ցանքսն ապահովելու համար՝

1 Ցանքսերի սերմացուն ազատ է որևէ բռնագրավումից.

2 Ցանքսերից ստացվելիք բերքը ամբողջովին պատկանում է ցանողին և նույնպես չի կարող ենթարկվել բռնագրավման.

3 Տեզական բոլոր հեղկոմները պարտավոր են իրենց պատասխանատվությամբ հսկել այս դեկրետի անշեղ գործադրությունը»[7]։

Հայաստանի Ռևկոմի և Գյուղատնտեսության ժողովրդական կոմիսարիատի համատեղ դեկրետներով գյուղժողկոմի տնօրինությանն են հանձնվում տիրազուրկ և լքված խաղողի ու այլ պտղատու այգիները, պետականացվում են օգտակար հանածոները, հանքային ջրերը, բուժիչ ցեխերը, աղի և դառնաղի լճերն ու լճակները, ճահիճներն ու ջրանցքները, ոռոգման ամբողջ սիստեմը։

Պետական ապարատում կատարված արմատական հեղաշրջմանը զուգա-

7 ՀՍԽՀ-ի դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 2, էջ 13։

հեռ, սովետական իշխանության հաստատման առաջին իսկ օրերից, ծավալուն պայքար կազմակերպվեց տգիտության ու խավարի, անգրագիտության ու անկուլտուրականության դեմ։ Այդ խնդրի իրագործման համար Ռևկոմը և լուսավորության ժողկոմը ձեռք են առնում մի շարք կոնկրետ միջոցներ։

Ս. Կասյանը 1920 թվականի դեկտեմբերի 6-ին ստորագրում է ՀՍՍՌ-ի Ռևկոմի պատմական հրամանը հանրապետության սահմաններում հայերենը պետական լեզու ճանաչելու մասին, միաժամանակ ապահովելով ազգային փոքրամասնությունների մայրենի լեզվի գործածությունը։ Այդ հրամանի համաձայն հայոց լեզուն դարձավ պետական լեզու։

Ս. Կասյանը լուսավորության ժողկոմ Աշոտ Հովհաննիսյանի հետ միասին հրապարակում են դեկտեմբերի 17-ի դեկրետը, որով «Հայաստանում գտնվող բոլոր դպրոցները, հնագիտական և ազգագրական թանգարանները, Մատենադարանը, տպարանները և բոլոր կուլտուրական հիմնարկները պետականացվում և հանձնվում են Լուսավորության ժողովրդական կոմիսարիատին»[8]։

Սովետական իշխանության հաստատման 18-րդ օրը կազմակերպվում և իր աշխատանքներն է սկսում Երևանի պետական Համալսարանը՝ մեր ռեսպուբլիկայի առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունը։

Բուրժուա-նացիոնալիստական կառավարության թողած ծանր, տխուր ժառանգության ամենացավոտ կողմերից էին ազգամիջյան հակասությունները։ Պրոլետարական ռևոլյուցիայի հանճարեղ առաջնորդ Վ. Ի. Լենինը Հայաստանի Ռևկոմի նախագահ Սարգիս Կասյանին հղած ողջույնի հեռագրում սովետահայ նորաստեղծ պետության ղեկավարությանը պատգամել էր՝ ապահովել ազգամիջյան խաղաղությունը, որը վերածվելու էր ինտերնացիոնալ եղբայրության։ Հավատարիմ մեծ ուսուցչի պատգամին, Հայաստանի Ռևկոմը անմիջապես ձեռնամուխ է լինում ազգամիջյան փոխադարձ թշնամության վերացման դժվարին գործին։ Դաշնակցական և մուսավաթական կառավարությունների անարգ տիրապետության տարիներին ազգային հակամարտությունները փոխադարձ բնաջնջման բնույթ էին ստացել։ Մուսավաթական և դաշնակցական պարտիաները Հայաստանը և Ադրբեջանը վերածել էին դժոխքի։ Արյունահեղությունը և ավերածությունը դարձել էր հարատև, շեն ավաններն ավերակների էին վերածվել, աշխատավորության դարերով ստեղծած տնտեսությունները փլուզվել էին, ժողովրդական լայն խավերը տեղահանվել էին, սով ու հիվանդությունները շարունակական բնույթ էին կրում։

Այսպիսին էր Հայաստանը, երբ իշխանությունն իր ձեռքն առավ Ռազմահեղափոխական կոմիտեն Ս. Կասյանի ղեկավարությամբ։

Սովետական Հայաստանի իշխանությանը շատ շուտով հաջողվում է կատարել լենինյան պատգամը, ստեղծել հայ և ադրբեջանցի աշխատավորների եղբայրական համերաշխություն։ Ազգային արյունալի ջարդերին, թալանին և ավերածությանը փոխարինում է ազգամիջյան խաղաղությունը։

Դժվարին խնդիր էր նաև «չեզոք զոնայի» ազատագրության և Հայաստանի անբաժան մասը մայր հայրենիքին միացնելու հարցը։

Մենշևիկյան ագրեսիվ նացիոնալիստական ծրագրերի ու անգլո-ամերիկյան իմպերիալիստների դիվանագիտական խարդախ ու դավադիր քաղաքակա-

---

8 Հայկ. ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 122, դ. 791, թ. 5։

նության հետևանքով Լոռին դարձել էր հայ-վրացական արյունահեղ ընդհարումների թատերաբեմ և ապա վերածվել «չեզոք զոնայի»։ Անվիճելի հայկական հողը դարձել էր «վիճելի» տերիտորիա։ Հայաստանի Ռազմա-հեղափոխական կոմիտեն չէր կարող մնալ պասսիվ և համբերատար ականատեսի դերում։ Լոռվա «չեզոք զոնայի» վերացումը և հայ աշխատավորության ազատագրումը հրամայական, արդար և իրավացի պահանջ էր։ Եվ Ռազմա-հեղափոխական կոմիտեն Ս. Կասյանի ակտիվ մասնակցությամբ նախապատրաստում է «չեզոք զոնան» մենշևիկյան զավթիչներից ազատագրելու և Սովետական Հայաստանին վերամիավորելու գործը։ Ս. Կասյանը Ռևկոմի անունից մանդատ է տալիս Կարմիր բանակի քաղաքական կոմիսար Հ. Լազյանին, որպես Սովետական Հայաստանի կառավարության ներկայացուցչի զինված ապստամբություն կազմակերպելու, մենշևիկյան զորքերը դուրս քշելու և Լոռին Սովետական Հայաստանին միացնելու համար։ Կասյանի նախաձեռնությամբ և հանձնարարությամբ Ռևկոմի անդամ Ա. Մռավյանը 1921 թվականի հունվարի սկզբներին Ղարաքիլիսա է մեկնում և հանդես գալիս այնտեղ գումարված պարտիական կոնֆերանսում, հաղորդում ՀԿ(բ)Պ Կենտկոմի և Ռազմա-հեղափոխական Կոմիտեի դիրեկտիվները՝ «չեզոք զոնան» ազատագրելու և այնտեղ սովետական իշխանություն հաստատելու մասին։

Կասյանը հետևում էր Լոռիում տեղի ունեցող իրադարձություններին։ Լոռվա հերոսական ապստամբությունը զորեղ աղդակ հանդիսացավ եղբայրական Վրաստանի հեղափոխության ապստամբության համար, որը հաղթանակեց Սովետական Ռուսաստանի անպարտելի Կարմիր բանակի եղբայրական օգնությամբ։

Անօրինակ ծանր էր նաև Սովետական Հայաստանի միջազգային քաղաքական վիճակը։ Քեմալական օկուպանտներին հաջողվել էր դաշնակցական կառավարության հետ կնքել 1920 թվականի դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի խայտառակ դաշնագիրը։

Ս. Կասյանի գլխավորած կառավարությունը չեղյալ համարեց այդ հայադավ դաշնագիրը, ամուր դաշինք կնքեց Սովետական Ռուսաստանի հետ։ ՌՍՖՍՌ զինված ուժերը նեցուկ դարձան երիտասարդ Սովետական Հայաստանի համար։

1921 թվականի փետրվարին դաշնակցական մաուզերիստները վերջին փորձն են անում վերականգնելու իրենց անփառունակ իշխանությունը։

Տաջիկ հրամանատարության, վրացական մենշևիկյան կառավարության և անգլո-ֆրանսիական իմպերիալիստների հրահրումով դաշնակները ձեռնարկում են մեծագույն չարագործություն՝ 1921 թվի փետրվարի 18-ին դաշնակցական-մաուզերիստական բանդաները խողովություն են բարձրացնում և գրավում Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևանը։

ՀՍՍՌ ռազմա-հեղափոխական կոմիտեն և Հայաստանի կոմպարտիայի կենտրոնական կոմիտեն Կարմիր բանակի զորամասերի պաշտպանությամբ թողնում են Երևանը և անցնում Ղամարլու—Վեղիբիսարի շրջանը։

Փետրվարից սկսած հակասովետական ավանտյուրան 45 օրվա ընթացքում Հայաստանի Ռևկոմին և պարտիական ղեկավարությանը հարկադրում է քաղաքացիական կռիվ մղել հայրենադավ ավանտյուրիստների դեմ։ Սովետական Հայաստանի ղեկավարությունը Կասյանի գլխավորությամբ Ղամարլուի ռազմաճակատում մեկ և կես ամիս կազմակերպում է դիմադրություն դաշ-

նակցական մաուզերիստական բանդաներին։ Ս. Կասյանը այդ ռազմաճակատում գտնվող պարտիական գործիչների, կառավարության անդամների և Հայաստանի Կարմիր բանակի հրամանատարության հետ հերոսական պայքար է մղում դաշնակների գերակշռող ուժերի դեմ։

Ղամարլուի ռազմաճակատում Ս. Կասյանն աշխատում էր Հ. Կոստանյանի, Շ. Ամիրխանյանի, Ի. Դովլաթյանի, Իվան Սվիրիդովի, Միխաիլ Մոլկաչանովի և ուրիշ ղեկավար կոմունիստների հետ՝ ձեռք-ձեռքի տված։ Ամենակրիտիկական մոմենտներին նա վերջնական հաղթանակի աննկուն հավատով էր տոգորված։ Այդ ոգով էլ նա հուսադրում և քաջալերում էր մարտիկներին, հոգ տանում զորքի և էվակուացված հաղարավոր մարդկանց պարենով ապահովելու մասին։ Ս. Կասյանը դիմում է Մոսկվա՝ Լենինին և Թիֆլիս՝ Օրջոնիկիձեին, հաղորդելով դաշնակների փետրվարյան խռովության հետևանքով ստեղծված ծանր վիճակի մասին և խնդրում շուտափույթ օգնություն։ Ս. Կասյանը մերկացնում է դաշնակների այսպես կոչված «փրկության կոմիտեի» դավերը և հաղորդում, որ հակասովետական դավադիրները աջակցություն են ստացել օտարերկրյա իմպերիալիստների, վրացական մենշևիկների և Թուրք զորահրամանատարության կողմից։ Կասյանը հավաստիացնում է, որ «Հայաստանի աշխատավորների հիմնական մասսան պաշտպանում է սովետական իշխանությանը, որ դաշնակների հիմնական ուժերը մաուզերիստներն ու կուլակներն են, իսկ այն աշխատավորները, որոնք դաշնակների ագիտացիայով խաբվել էին, արդեն հիասթափվել են մաուզերիստներից և քանի գնում ավելի ու ավելի մեծաթիվ խմբերով անցնում են մեր կողմը»։

Ս. Կասյանը նշում է, որ «միակ իշխանությունը, որը կկարողանա բուժել երկրին դաշնակների հասցրած վերքերը, դա Հայաստանի բանվորների և գյուղացիների իշխանությունն է, Սովետական իշխանությունը»[9]։ Կասյանը խնդրում է Սովետական Ռուսաստանի Կարմիր բանակի օգնությամբ՝ Սովետական Հայաստանի երիտասարդ Կարմիր բանակին, որպեսզի «Հայաստանը աշխատավոր մասսաները վերջնականապես հաղթեն իրենց դասակարգային թշնամուն»։

1921 թվականի մարտին Ղամարլուի ճակատում Ս. Կասյանի գլխավորած Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի դրությունն ավելի է ծանրանում. պարենը և զինապաշարը սպառվել էին։

Ս. Կասյանը բանակի հրամանատարության հետ միասին դիմում է Կովկասյան բյուրոյին և ռազմաճակատի հրամանատարությանը, խնդրում օգնություն կազմակերպել դրությունը փրկելու համար։ Վ. Ի. Լենինի կարգադրությամբ Ս. Կասյանի խնդրանքը բավարարվում է։ Կարմիր զորամասերն անցնում են գրոհի։

1921 թվականի ապրիլի 2-ին Կարմիր բանակի զորքերը հաղթականորեն գրավում են Երևանը և տապալում դաշնակների տխրահռչակ «փրկության կոմիտեն»։ Ապրիլի 4-ին Երևան է ժամանում ՀՍՍՌ Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեն Ս. Կասյանի գլխավորությամբ և ձեռնամուխ լինում սովետական կարգերի վերականգնման աշխատանքին։

Դաշնակների փետրվարյան ավանտյուրայի լիկվիդացումից հետո Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի առջև ծառացել էին նոր խնդիրներ։ Անհրաժեշտ էին

---

9 Տես ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 5, գ. 44, թ. 3։

հերոսական ջանքեր՝ ավանտյուրայի հետևանքները վերացնելու, ժողովրդի վերքերը բուժելու, պարտիական և սովետական ապարատը վերակառուցելու և վերակենդանացնելու, ինչպես նաև տնտեսական նոր քաղաքականության կենսագործմանը ձեռնամուխ լինելու և անցյալում թույլ տրված սխալները վերացնելու համար։

Դեռևս 1921 թվականի մարտի 29-ին Կասյանը Ղամարլուի ճակատից Կովկասյան բյուրոյին ուղարկած նամակում նշում էր, որ շուտով սովետական իշխանությունը կվերականգնվի ամբողջ Հայաստանում, ուստի «անհրաժեշտ է այժմ իսկ նշել մեր տակտիկայի հիմնական գիծը և այն կենսագործող օրգանը»[10]։ «Անհրաժեշտ է... հաստատել երկրի սոցիալ-տնտեսական պայմաններին համապատասխան, որոշակի և պարտադիր քաղաքականություն և միասնական իշխանություն»—գրում էր Կասյանը։

Երևան ժամանելուց հետո Ս. Կասյանը ուղիղ հեռագրագծով կապվում է Ս. Օրջոնիկիձեի հետ և զեկուցում ռեսպուբլիկայի վիճակի մասին։ Նա հաղորդում է, որ դրությունը ծանր է, պարենամթերք չկա, բանակը վերջին պատառն է սպառում, բացակայում են տրանսպորտի միջոցները և խնդրում է արտակարգ միջոցներ ձեռնարկել։

Ապրիլի 6-ին Սերգո Օրջոնիկիձեին ուղարկած հեռագրում Կասյանը հաղորդում է, որ Երևանից հեռանալիս դաշնակները կողոպտել և տարել են պետական դանձարանային խոշոր արժեքները։ Նա խնդրում է Երևան ժամանելիս հետը բերել սովետական դրամանիշ և անհրաժեշտ քանակով վայլուտա Իրանից սննդամթերքներ գնելու և երկրի պարենային ճգնաժամը հաղթահարելու համար։

Դաշնակների կրած պարտության կապակցությամբ հակառևոլյուցիոն մամուլը պրովոկացիոն լուրեր էր տարածում Կարմիր բանակի մասին, նրան ներկայացնելով որպես «օկուպացիոն ուժ»։ Կասյանը հերքում է բուրժուական մամուլի տարածած հերյուրանքները և միաժամանակ շեշտում, որ Կարմիր բանակը Հայաստան եկավ եղբայրական օգնություն ցույց տալու բանվորա-գյուղացիական մասսաներին, որ դա Սովետական Հայաստանի մեծ դաշնակից—Սովետական Ռուսաստանի հարազատ Կարմիր բանակն է, որը եկավ, որպեսզի պայքարի մաուզերիստների դեմ և «վերականգնի հայ չքավորության իշխանությունն իր հայրենիքում»։

Հայաստանի Կարմիր բանակի մարտունակության ուժեղացումը Ս. Կասյանի կարևոր հոգսերից մեկն էր։ 1921 թվականի ապրիլի 7-ին նա հանդես է եկել Հայաստանի կարմիր զորամասերի հետագա պահպանման, նրա մարտական-քաղաքական ուսուցումը կազմակերպելու հարցերի շուրջը՝ կոնկրետ խնդիրներ դնելով բանակի հրամանատարության առջև[11]։

Սարգիս Կասյանի գործունեության մեջ կարևոր տեղ է գրավում Հայկական ՍՍՌ-ի ընդհանուր և հատկապես տնտեսական քաղաքականության մեջ նոր կուրս կիրառելու հարցը։ Ինչպես հայտնի է, ՌԿ(բ)Պ 10-րդ համագումարը մշակել էր պարտիայի և սովետական իշխանության նոր տնտեսական քաղաքականությունը։

Նոր տնտեսական քաղաքականության մասին պարտիայի 10-րդ համագու-

10 ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 85, ց. 18, գ. 63, թ. 1—2։
11 ՀՍՍՌ ՀՌՍՇ ԿՊԱ, ֆ. 113/ՀՍ, ց. 3, գ. 6, թ. 153։

մարի որոշումները և լենինյան դիրեկտիվները ուղեցույց հանդիսացան պարտկազմակերպությունների և սովետական օրգանների գործունեության համար։ Ս. Կասյանը նվիրվեց այդ դիրեկտիվների կենսագործմանը, առավել ևս, որ դրանք միանգամայն ներդաշնակում էին այն դրույթներին, որ նա պաշտպանում և գործունեության մեջ էր դնում Հայաստանում սովետական կարգեր հաստատելու առաջին իսկ օրից։ Կասյանի նախաձեռնությամբ Ռևկոմը հրապարակում է դեկրետներ ներման մասին։

1921 թվականի ապրիլի 10-ի և 24-ի դեկրետները խաղաղ աշխատանքի անցնելու և ավերված երկրի վերաշինությանը նվիրվելու կոչեր էին։ Հայաստանի ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեն եռանդուն պայքար մղեց սովետական օրինականության խախտումների դեմ։ ՀՍՍՌ կառավարությունը մեծահոգի գտնվեց և ներման դեկրետով որոշեց ազատ համարել քաղաքական և ամեն տեսակի ու ձևի պատասխանատվությունից, առանց բացառության բոլոր նրանց, ովքեր պայքարել էին Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության դեմ, անկախ նրանց անմիջական գործերից, կոչումից, դիրքից, պաշտոնից։

Այդ դեկրետները հրապարակվեցին մամուլում, հասցվեցին բնակչության լայն զանգվածներին, որոնք խնդությամբ և երախտագիտությամբ ողջունեցին սովետական իշխանության քաղաքական իմաստության ու ներողամտության այդ մեծ ակտը։

ՀՍՍՌ ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեն Ս. Կասյանի գլխավորությամբ մի շարք գործնական քայլեր ձեռնարկեց քաղաքացիական կռիվների ժամանակ գյուղերից ու քաղաքներից էվակուացված կամ փախած բնակիչներին իրենց բնակավայրերը վերադարձնելու, նորմալ կյանքի կոչելու գործում։

Ս. Կասյանի մասնակցությամբ ու ղեկավարությամբ լայն աշխատանք սկսվեց գարնան գյուղատնտեսական կամպանիան ծավալելու, գյուղացիներին օգնելու և ժողովրդական տնտեսության վերականգնման համար։

Սարգիս Կասյանը ՀՍՍՌ ռևկոմի նախագահի պոստում աշխատեց 1920 թ. նոյեմբերի 29-ից մինչև 1921 թվականի ապրիլի վերջը։ Դա մի ծանր ժամանակաշրջան էր՝ լի փորձություններով, բարդություններով և հաղթանակներով։ Այդ ժամանակաշրջանը միաժամանակ հանդիսացավ լուրջ դպրոց՝ սովետական կարգերի հաստատման ու ամրապնդման համար, աշխատավորների իշխանության քաղաքականության մշակման, նրա փորձի համար։

Հետագա տարիներին, մինչև 1937 թվականը, այսինքն մինչև իր կյանքի վերջը, Ս. Կասյանը ղեկավար աշխատանք էր տանում Հայաստանի և Անդրկովկասի պարտիական և սովետական օրգաններում՝ իր ուժերը նվիրելով սոցիալիզմի հաստատման ու ամրապնդման վեհ գործին։